

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

«Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան»
հիմնադրամի և ՀՀ ԿԳՆ Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ի միջև

ք. Երևան, 24 փետրվարի 2015թ.

Կողմերը

Կրթական, գիտամանկավարժական և մշակութային հարաբերությունների հաստատման համար «Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան» հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Գագիկ Գալստյանի (այսուհետ՝ համալսարան), և ՀՀ ԿԳՆ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Աշոտ Բլեյանի (այսուհետ՝ կրթահամալիր), ովքեր գործում են իրենց կանոնադրության համաձայն, ստորագրում են սույն համաձայնագիրը:

Հոդված 1. Համագործակցության առարկան

Համագործակցությունը տարածվում է Կողմերի ֆակուլտետների, դպրոցների, ամբիոնների, կենտրոնների, գրադարանների վրա: Ծրագիրը հեշտացնելու համար յուրաքանչյուր հաստատություն իր աշխատակազմից նշանակում է պատասխանատու անձ, որը կկոորդինացնի այս համաձայնագրի հետևյալ նպատակներով որոշված գործողությունները.

1. համագործակցություն ուսուցման ոլորտում.
2. սովորելու, ուսուցանելու և մասնագիտական փորձառության՝ Կողմերի ստեղծած հնարավորություններից Կողմերի սովորողների համար օգտվելու պայմանների ստեղծում.
3. ուսումնական նյութերի և հրապարակումների փոխանակում.
4. միասնական մասնակցություն միջազգային ծրագրերում.
5. կրթահամալիրի ավագ դպրոցի սովորողների համար մասնագիտական կողմնորոշման բաց պարապմունքների կազմակերպում Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանում կամ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրում.
6. համալսարանի կողմից կրթահամալիրի ավարտական դասարանի սովորողների ներգրավում տարբեր ձևաչափերով (այդ թվում՝ արտերկրի ճարտարապետական դպրոցների հետ համատեղ) կազմակերպվող աշխատանքային հավաքների ու սեմինարների աշխատանքներին.
7. արտազնա համատեղ ամառային դպրոց-ճամբարների և ճանաչողական էքսկուրսիաների կազմակերպում,
8. կրթահամալիրի առանձին մասնաշենքերի արդիականացման կամ դիզայն-նախագծերի մշակմանն առնչվող թեմաների ընդգրկում համալսարանի կուրսային և ավարտական աշխատանքների շրջանակներում.

9. կրթահամալիրի ամենամյա հանրակրթական «Արտ-միջավայր» ստուգատեսի համատեղ կազմակերպում.

10. Մխիթարյան Միաբանության հետ եռակողմ և բազմակողմ ծրագրերի իրականացում:

Հոդված 2. Հասարակական կապեր

Կողմերը նպաստում են համաձայնագրով նախատեսված դրական համագործակցությանը հաղորդագրություններով, հրապարակումներով, ազգային և միջազգային մամուլ հաղորդագրություններով: Մինչև հրապարակումը կողմերը պարտավորվում են համաձայնեցնել բոլոր քայլերը, որոնք կարող են վիճելի կամ կասկածելի լինել:

Հոդված 3. Տնողությունը

Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և վավեր է 5 տարի ժամկետով: Անհարժեշտության դեպքում այն կարող է հավելվածներ (լրացումներ) ունենալ կամ վերանայվել: Փոփոխություն նախաձեռնող կողմը երեք ամիս առաջ գրավոր տեղեկացնում է մյուս կողմին: Այնուհետ կողմերը կամ վերանայում են պայմանները կամ նոր պայմաններ մշակում:

Հոդված 4. Ավարտը

Կողմերից յուրաքանչյուրը իրավունք ունի դադարեցնելու սույն համաձայնագիրը՝ մեկ ամիս առաջ տալով գրավոր հաղորդում: Նման իրավիճակի դեպքում այս համաձայնագրի կետերը շարունակում են գործել մինչև վերջնական դադարեցումը:

Հոդված 6. Ընդհանուր

Համաձայնագիրը կազմված է հայերեն, հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Կողմերին տրվում է Համաձայնագրի մեկական օրինակ:

Ճարտարապետության և
շինարարության Հայաստանի ազգային
համալսարանի ռեկտոր՝



Գագիկ Գալստյան

Գագիկ Գալստյան, Տեղյակ-105.

Երևանի «Մխիթար Մեբաստացի»
կրթահամալիր ՊՈԱԿ Տնօրեն՝

Աշոտ Բլեյան

mskh.am, info@mskh.am

Երևան, Բաֆթու-57,

հեռ.74.72.46, 091.43.10.99

